

խառութեան հետ այն ժամանակ երևան կը գայ այս գործի բոլոր ծանրութիւնը. իսկ թէ ի՞նչ չարիքներ կը յատճանան այս ձևով անհատական բարոյականութեան աւանդումներէց, զիւրին է զուշակել. եթէ փիլիսոփայութիւնն այսօր չունի մի ամէնից ընդունուած բարոյագիտութեան սխալման արդեօք ի՞նչ պիտի ուսուցանեն ժողովրդական գպրոցի ուսուցիչները բարոյագիտութեան անուան տակ:

Գ Լ Բ Ս Ի Մ .

Եյս անգամ ինձ առաջնորդ բռնելով Վօքոսի պատմարան Զարանձագ գաւառացի Մինաս բարաբը, հարևանցի կերպով կը ներկայացնեմ Գէրսիմի տեղագրութիւնը, քիւրդ և հայ ժողովրդեան կենցաղավարութիւնը:

Գէրսիմի որ Բարձր Հայոց արևմտեան մասն կը բռնէ, բարձր և կղզիացած զիրք ունի, երեք կողմից ջրեր պատած են, և յարեկից Բիւրակեան լեռներու շղթան ընդհատած է:

Գէրսիմի հիւսիսային և հարաւային ստորոտներից յարեմուտս կը հասնի Նփրատի երկու մեծ ծիւղերն և այդ երկրի վերջաւորութեան վերայ՝ Զմշկածագից խոնարհ իրար կը խառնուին:

Եյս երկու ծիւղերից Բարձանին որ Մշոյ գաւառից անցնելէն և ճապաղ-ջրի խառնուելէն յետոյ կը քերէ Գէրսիմի հարաւային ստորոտներն, Բալուայ-ջուր անուամբ անցնելով Բայուայ, Փերինայ, Բերգակի և Զմշկածագի սահմաններէն և զորս աջ թողով կը խառնուի Սև ջրի, նաև այս ընթացքի մէջ ի ձախ կը թողու Սարրերգու գաշան:

Գէրսիմի հիւսիսից կանցնի Սև ջուրն, այս ջուրն իւր ընթացքի մէջ աջ ափին վերայ կը թողու Մամսխաթուն (Գերջան), Երզնկայ, Կամախ և Զմարա, Գէրսիմի արևմտից պատած է Սև ջրի շարունակութիւնը, որ Փնկեանէ խոնարհ ուղղուած է ի հարաւ-արևելս մինչև Բալուայ ջրի խառնուրդն: Սև ջուր որ և այս ընթացքի մէջ Ակնայ ջուր կատարի ձախ եղբին վերայ կը թողու Փնկեան, աջին վերայ Ակն և ձախին վերայ Չը մշկածագ:

Եյս երկու ջրերու միջավայրն բարձր զիրք մի բռնած է Գէրսիմի ունի ընդարձակ տարածութիւն որ կերկարի յարեկից յարեմուտս 5—6 աւուր ձանաղարհ, ըստ ամենայնի լեռնային և մեծ մասամբ անտառապատ:

Գէրսիմի հարաւային ստորոտներն, այն է Բալուայ ջրի աջ եղբին վերայ տարածուած են Բալուայ, Բերննայ, Բերգակի և Զմշկածագի գաւառներն, որք մեծ մասամբ հայ են, իսկ արևմտեան ստորոտներն Փնկեան, Կամախ, Ակն և Զմշկածագի մէկ մասն բռնած են. սքրա ևս մեծ մասամբ հայ բնակիչներէ կը բաղկանան, մասնաւոր ինչ հայ-հոռոմներ:

Գէրսիմի շղթան ուղղակի յարեկէս Մնձուր, Տուժիկ, Գլըլ-քիլիսէ, Աղքան, Հէյթան լեռներէ կաղմուելով՝ կը հասնի Բիւրակն:

Գէրսիմի միջէն երկու մեծ ջրեր ի հարաւ կը խոնարհին, մերձ Փերինայ իրար կը խառնուին, ապա Փերինայ ջուր անուամբ և Մուրատի մեծութիւնը առնելով Աւսեկու մօտ կը խառնուի Մուրատի:

Փերինայ ջուրն Բիւրակն լերան արևմտեան հիւսիսային կողերէն սկիզբ կառնէ, նախ յարեմուտս հոսելով կը մտնէ Գէրսիմի, Գէրսիմի արևելեան հարաւային կողերն քերելով՝ ի հարաւ արևմուտս կը հոսի ցխառնուրդ Մուզուրայ. երկրորդն Մզուրայ կամ Մնձուրայ ջուրն, որ Գէրսիմի արևմտեան ծայրէն կսկսի՝ նախ ի հարաւ արևելս կը հոսի, ապա հարաւ կիջնայ ցխառնուրդ Փերինայ. այս ջուրն Փերինայ ջրի չափ մեծութիւն և երկարութիւն չունի, սակայն պտոյտ կըտայ բուն Գէրսիմի մէջ:

Գէրսիմի որպէս կերէի, հինգ կառավարչական մասի կը բաժնուի երկրի բնական գիրքին համեմատ, որոց երեքին մէջ կը նստին գայմագամներ, իսկ միւս երկու մասն գեռ թուրք կառավարիչներու երես տեսած չէ:

Գէրսիմի լեռնային հինգ բաժանման մէջ վեր ի վերոյ կը հաշուեն 60,000 հրացան կրող քրդեր, ոմանք այս թիւը կը հաստատեն. ըստ իս 40,000 հրացան կրող քիւրդեր միշտ պատրաստ են. ամբողջ քիւրդ բնակչաց թիւը 100,000էն կանցնի:

Գէրսիմի լեռնային մասի մէջ կը գտնուին նաև քանի գիւղերու մէջ 350 տան չափ հայեր, որք քիւրդերու հետ շփուելով մեծ մասամբ մոռացած են իւրեանց մայրենի լեզուն, քիւրդերունման կեանք վարելով քաջաբար գիմաղբած են շատ անգամ թշնամոյն. այս հայերն Միւրակցի անուամբ կը կոչուին:

Աւթսունամեայ Մինաս իւր հօրից լսած է որ Գէրսիմի վերայ միշտ թուրքեր պատերազմ մղած են և ամէն ժամանակ յաղթուած՝ առանձին առանձին ժամանակներու մէջ լազեր, ենիշերիներ, առնաւուաներ ևլն. ձմեռած են Զարսանձագ հայերու մօտ, յարձակում գործած են Գէրսիմի վերան և յաղթուած:

Այս քիւրդեր Ղազարաշ կը կոչուին, մասմե-
տական չեն ունին մասնաւոր ինչ քրիստոնէական
սովորութիւններ, թիւրքեր Ղազարաշ անուն կը տան
իր անարգանք, որպէս քրիստոնէաներուն զեալուր
կամ քեափիբ (անհաւատ), որով թիւրքի և զՂԸ-
բաշի մէջ մեծ թշնամութիւն կայ:

Արևի աւելի մասմեդականութեան զարձնե-
լու համար օսմանցիք պատերազմ մղած են քիւր-
դերու զէմ, քան թէ հպատակեցնելու:

Գէրսիմի լեռնային մասն, որպէս ասացի,
հինգ գլխաւոր բաժանում ունի, իւրաքանչիւր բա-
ժանման վերայ հարեանցի ակնարկ մը կը ձգեմ
այստեղ:

Ա. Օփաճուխ որ Գէրսիմի արևմտեան ծայրն,
Մզուրայ ջրի սկզբնաւորութեան վերայ գաւառ մի
է, Փինկեանի արևելեան բարձրութեան վերայ
բարձր դիրք ունի, 35—40 զիւղ զՂԸԲԻՄԱՇ քիւրդ
բնակչար: Սորա կէս հպատակ ժողովուրդ են. այս-
տեղ միւսիւր կը նստի կառավարութեան կողմից,
մէջն կը գանուին բաւական թուով առևտրական
հայեր: Գէրսիմի մէջ այս վայրն Երիզայի մօտ լի-
նելով առևտրի համար այստեղ կը գիմէ ժողո-
վուրդն:

Այս մասին մէջ հայ բնակութիւն չկայ, սորա
արևելեան սահմանի վերայ որ մի աւուր ճանա-
պարհ հետի է, կայ Հաւլորու, որ և սուրբ Կարա-
պետի վանքը, ուր վանահայր վարդապետ մի կը
նստի, կառավարելով քիւրդերու սրբը: Աւանին
կից է վանքի զիւղն, որ 25 տան չափ հայերէ բաղ-
կացած է, որք Միւրաքցի քաջ ցեղին յատուկ են:

Այս վանքը մեծ յարգանք ունի ամբողջ Գէր-
սիմի մէջ, հետաւոր վայրերէն այստեղ ուխտի կը
գան հայեր և քիւրդեր, զո՛հ և պատարագ մատու-
ցանել կը տան, ժողովուրդի (քիւրդ) յարգանքը այս
վանքի վերայ մեծ է, եթէ մէկը ուխտեց վանք
գնալ, ձեան թշնամու և կամ մի այլ առթիւ
չյաջողեցաւ գնալ, եղած տեղն կը դառնայ այդ
վանքի կողմն, առջևը վանքի անունով մի քար կը
ցցէ, 100 կամ 200 քալ յետ կը գնայ, ապա շո-
քելով ծնկի վերան, կուգայ և այդ քարն կը համ-
բուրէ, կրկին անգամ ետ ետ գնալով որոշեալ տե-
ղի վերայէն գուրս կը գոյ:

Հաւլորու վանքի շուրջն ոսկույ հանքեր կան,
քանի անձեր կը հաստատեն թէ ի վաղուց վանքի
զիւղի Միւրաքցի հայեր ոսկի հանած, զրամ կորած
են, այսօր ևս այդ զրամներն կան և խիստ մեծ են:

Բ. Տուժիկ որ Օփաճուխէն մէկ ու կէս աւուր
հեռաւորութիւն ունի զէպի յարևելս. սա կը հա-
մարուի բուն Գէրսիմ և Գէրսիմի ամենամասնիկ
մասն է: Տուժիկի մի մասն ևս կը կազմէ Ղուժի-
գէրէսին, ուր մինչև ցայսօր օսմանցիկ մի ոտը

մտած չէ և ամբողջ բունակ մի ևս չէ կարող
մտնել, Տուժիկ միշտ պատրաստ ունի 2,000—
3,000 հրացանաւոր քիւրդեր, սա Գէրսիմի ամե-
նապահով վայրն լինելուն՝ ամէն կողմէ այստեղ
դիմած՝ ազատան գտած են կառավարութեան ձեռ-
քէն հայածուած քիւրդեր, կազմած են քաջաց
աշխարհ մի:

Գերջանու, Երիզայի և Փինկեանի կողմից
Տուժիկ անհպիլի է, միայն ի հարաւոյ Խոզաթու
կողմից մի ճանապարհ կը բարձրանայ, մի աւուր
հայրի հասնի, ի հիւսիս բարձրանալով միշտ:

Գ. Փախ որ Տուժիկէն մի աւուր ճանապարհ
ի հարաւ-արևելս կընկնի, Չարսանձագի հիւսիսա-
յին բարձրութեան վերայ ընդարձակ լեռներու մէջ
մի մեծ տարածութիւն ունի. 40—45-ի չափ քիւրդ
զիւղերով կէս հպատակ ժողովուրդ մի կը կազմեն,
որք Ալանցի ցեղին յատուկ են, Փախ զիւղի մէջ
զինուոր կը նստի, Ալանցի ցեղի գլխաւորն Կու-
լայի ազա անուն մի ազդեցիկ քիւրդ էր, Գէր-
լայից վերջի անպատմութիւնից յետոյ այդ ա-
զան Երիզացի Կիրակոս Էփենտիի (երևի Գազան-
ձեան) միջնորդութեամբ հպատակած է օսմ: կա-
ռավարութեան, որով Կուլայի տղային գալմագա-
մութիւն և պատիւ տրուած է, այժմ Փախի գա-
ւառի գայմագամ է յիշեալ Կուլայի ազայի որ-
դին, որոյ տունը Չուխուր զիւղն է, իւրք Մեղ-
կերտ նստելով կը կառավարէ ՂԱլանցիս:

Թուէս 7—8 տարի առաջ 100 զինուոր միայն
կար Փախայ մէջ:

Փախայ գաւառի 2—3 զիւղերու մէջ կան
50—60 տուն հայ, Չուխուրի մէջ 15 տուն են հա-
յեր, որ Միւրաքցի են և քաջ, սորա զիրենք հայ
թագաւորաց ցեղից սերած կանուանեն. Տէր-Ովան
զիւղին մէջ ևս 15 տուն են, նոյնպէս Միւրաքցի,
Տէր-Ովան Ղալլ-բիլիսէի և Փախայ միջավայրն է,
Էբըզ զիւղի մէջ 2 տուն անուանի Միւրաքցի հա-
յեր կան:

Միւրաքցի հայեր շատ քաջ, պարզ և միամիտ
ժողովուրդ են, որոնցմէ կանխածին քիւրդեր և
Չարսանձագի թիւրք բէկեր, այս հայ ժողովրդի
միամտութեան և տխմարութեան վերայ Չարսան-
ձագի հայերն յօրինած են բաղմաթիւ առակներ,
առասուկներ, որոց քանին պատե՛հ առթիւ պիտի
ներկայացնեմ:

Դ. Ղալլ-բիլիսէ, սա ևս մի աւուր ճանա-
պարհ յարևելս է Փախայ և շատ բարձր, այստեղ
բաղմաթիւ լեռներու մէջ զեանդուած են 60-ի
չափ բրդական զիւղեր, որք յարևելից սահմանա-
կից են Կեղուայ (Գղի) վիճակին, այստեղ ևս գայ-
մագամ կը նստի. Ղալլ-բիլիսէ զիւղաքաղաքին

մէջ կան 20 տուն հայեր, ուր ևս օսմ. զինուոր կը նստի:

Վզըլ-բիլիսէի սահմանի վերայ 10 ժամ յարեւրս, կայ Հարութի հայաբնակ գիւղն որ մօտ 250 տնէ կը բաղկանայ:

Ե. Աղքան որ Դերսիմի հինգ բաժանումներէ ամենէն մեծն է, Դերսիմի արեւելեան հիւսիսն, որ կայ բուն Դերսիմի և Կերջանի մէջ տեղն, Դերսիմի այս մասին բնակիչներն են Իզլցի ցեղն, որոց վերայ իրրև ցեղապետ կիշիսէ ի վաղուց հաշակուած Շահ-հիւսէին բէկն, որ միննոյն ժամանակ կառավարութեան կողմից գայմագամ նշանակուած է, տէր է նաև Աղքանի չորս աղահամբերու, Դերսիմի Աղքանի մասին մէջ մօտ 400 գիւղեր կան, Շահ-հիւսէին բէկ իւր մօտ 100 զինուոր կը պահէր իւր ծառայութեան մէջ գործածելու համար, Դերսիմի այս լեռնային մասի մէջ կան նաև 10-ի չափ փոքրիկ հայ գիւղեր, մօտ 160 տուն:

Բացի Դերսիմի Աղքանի մասէն, Շահ-հիւսէին բէկ նաև Կերջանու կողմն ունէր 100-ի չափ գիւղեր, որոց մեծ մասն հայեր են, իւրաքանչիւր գիւղ մեծ թուով բնակիչներ ունի, օրինակ վերին Բագահիճ մօտ 1000 տուն, վարի Բագահիճ 200 տուն ևլն:

Դերսիմի արևմտեան ծայրից (Օվաճուխէն) Աղքանը ձիգ վեց աւուր ճանապարհ է. Աղքանէ արևելեան հարաւ մի աւուր ճանապարհ է Բիլի-Բիլիէն ի Կարին արևելեան հիւսիս 3 աւուր ճանապարհ, նոյնչափ է նաև Աղքանէ Կերջանով ի Կարին:

Վերոյիշեալ Դերսիմից հինգ բաժանման լեզուն կը տարբերի իրարմէ, շատ անգամ իրարու անհասկանալի գաւառաբարբառներ կը գործածեն:

Դերսիմի մէջ ձիպանցի ցեղ մի կայ, որոնցից 100 հրացանաւոր հաղիւ գուրս գայ, բայց սոքա ամբողջ Դերսիմի մէջ մեծ անուն հանած են իրենց քաջութեամբ, որոցմէ չորս հոգի շատ անգամ և երկար միջոց օսմանեան 150 անձէ բաղկացեալ զինուորաց զիմադրած են, շատ անգամ ևս իրենց թշնամեաց զէմ պատերազմած և յաղթած են:

Դերսիմի, որպէս ասացի, լեռնային և խիտ անտառապատ է, բնակիչները վարժուած են հետիոտտ անհայելի ժայռերու վերայ ման գալ, ոտով կարող են թշնամոյն առջևէն խոյս տալ կամ յարձակում գործել, ձի ասուած բանը հաղիւ ուրեք կը տեսնուի այն ևս բէկերու մօտ:

Դերսիմից կրօնաւորներն տէտէներն, շէյխերն և սէյիտներն են. սոքա զէնք չունեն, մի ցեղի, այն է Վուաուշանցոց ցեղին կը պատկանին և մեծ յարգանք կը վայելեն ժողովրդեան մէջ, ամբողջ Դերսիմի մէջ տարածուած են, ամէն տեղ մեծ յարգանք ունեն, գրեկ կարգալ շին գիտեր. երկու

իրարու թշնամի և արիւնարբու ցեղերու մէջ կը միջնորդեն, կը հաշտեցնեն, նոցա խօսքն ժողովրդեան մէջ իրրև Աստուծոյ պատգամ է. Վուաուշանցոց բուն բնակութեան վայրն մերձ Մեզկերտու, Մուրայ ջրի ձախ ձողան է և 60 տուն կը լինին, Ոչ որ ձեռք չէ կարող սոցա վերայ բարձրացնել:

Տէտէներն ևս ըստ Դերսիմից սպիտակ կտաւէ շոր կը հագնեն, որոնցից միայն կը տարբերին նրանով որ գլուխին կապոյտ ֆաս կը գնեն, վերան խաշաձ ևաղմա կը կապեն:

Դերսիմից կրօնական արարողութիւնը, պատկը և թարոււր կը կատարէ տէտէն կամ սէյիտը, Բոխիշի (տարտղան) ծառերուն, որ աւանդութիւն ունին, յարգանք կը մատուցանեն, հայ վանքերն ուխտի կը գնան, երբ նեղն ընկած են Իզլըր (ս. Սարգիս) կը կանչեն, Մտամոս ժայռի գաղաթից բղխած աղբիւրին մեծ յարգանք կը մատուցանեն, այդտեղ ուխտի կը գնան, ջրով կը լուացուին:

(Կը շարունակուի)
Ս. Հայկունի.



Մ Ե Ն Բ Ը Լ Ո Ւ Ի Բ Ե

Առողջ ապահովութիւնը ֆրանսիական զօրքի մէջ. Ս. Պետերբուրգի Երպէս բժշկ. շարաթաթեթը նետեւալ տեղեւութիւններն է հաղորդում Մաղազակարում եղած Ֆրանսիական զօրքի առողջապահական վիճակի մասին, քաղելով այդ տեղեւութիւնները Ֆրանս. Annales d'hygiène publique հանդիսից:

Մաղազակարի արշաւանքի ժամանակ թշնամիներէց սպանուած է 7 հոգի, վիրաւորուած 94, հիւանդութիւններէց մեռու են 6,000 հոգի, 5,1 և աղ եղել են 15,000 հոգի: Ազգային ժողովում պատերազմական նախարարը ստիպուած է եղել խոստովանելու, որ այդ սոսկալ թուերը նետեւանք են այն անհոգութեան, որով զինուորական վարչութիւնը վերաբերուել է առողջապահութեան տարրական պահանջներին և այն ցուցմունքներին, որ առաջուց արել են բժիշկները: Այսպէս տեղով քննուած զինուորները, զանազան զնոունքի խայթելուց յառաջացած վէրքեր ոտներին, փոքով ևս միջատներով ծածկուած, նաքատութիւն չեն ունեցել շոր փոխելու կամ անպիտով լուացուելու: Ընայելով որ տեղը սաստիկ տարածուած է եղել զօրքի մէջ, բժիշկները քննազրեթէ չեն ունեցել:

Հիւանդ զինուորները թափուած են եղել վրաններում, մինչ սպաննող ընկուել են կարգին տներում: Միակ պատերազմը որ այս կողմից կարող է համեմատուել Մաղազակարի արշաւանքի նետ, այդ St.-Domingue-ի պատերազմն է, որի ժամանակ գեներալ Leclerc-ի 60,000 հոգոց բաղկացած զօրքը գրեթէ ամբողջապէս կոտորուել է զինուն տեղից Աստիւան կղզիներում: 4 ամսուան ընթացքում զինուն տեղից մնում է 30,000 հ., իսկ մնացեալ 10,000-ից, 7 տարի յետոյ Ֆրանսիա են վերադարձնել ընդամենը 500 հոգի: